



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԱՐԴԱՆՅԱՆՆ ՈՒ ՆԱՆՈՒՇՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգալի թիվ 8001/07)

ՎՃԻՌ

(ըստ էության)

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

27 հոկտեմբերի 2016թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

06/03/2017

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

Վարդանյանն ու Նանուշյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]՝ *Նախագահ,*

Լեդի Բիանկու [Ledi Bianku],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Ռոբերտ Սպանո [Robert Spano],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքը [Tim Eicke]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2016 թվականի հոկտեմբերի 4-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության երեք քաղաքացիներ պրն Յուրի Վարդանյանի, տկն Շուշանիկ Նանուշյանի եւ պրն Արտաշես Վարդանյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2007 թվականի փետրվարի 19-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 8001/07) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Վ. Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական

դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Հայաստանի կողմից ընտրված դատավոր պրն Արմեն Հարությունյանն ի վիճակի չի եղել մասնակցելու գործի քննությանը (28-րդ կանոն): Հետեւաբար, Պալատի նախագահը որոշել է Պաուլին Կոսկելոյին նշանակել ժամանակավոր (*ad hoc*) դատավոր (29-րդ կանոնի 2-րդ կետի «բ» ենթակետ):

4. Առաջին դիմումատուն մասնավորապես պնդել է, որ իրեն կամայականորեն զրկել են իր հողամասից, ինչին հաջորդող վարույթում իրեն զրկել են արդար դատաքննությունից: Ապա նա բողոքել է, որ իրեն ապօրինաբար զրկել են իր տնից:

5. 2010 թվականի նոյեմբերի 25-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

6. Դիմումատուները մեկ ընտանիք են, ապրում են Երեւանում՝ Բյուզանդի 13 հասցեում տեղակայված, ընդհանուր 1385,6 քառ. մետր չափեր ունեցող հողամասի վրա գտնվող տանը: Երկրորդ եւ երրորդ դիմումատուներն առաջին դիմումատուի կինն ու որդին են:

Ա. Տան եւ հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ նախնական վարույթը

7. Չպարզված օրն առաջին դիմումատուն պահանջ է ներկայացրել Երեւան քաղաքի Սպանդարյանի շրջանային ժողովրդական դատարան՝ պահանջելով

անվավեր ճանաչել իր տատիկի ու պապիկի եւ պետական գերատեսչության միջեւ 1933 թվականին կնքված համաձայնագիրը, համաձայն որի՝ նրանց բնակատեղին, որը բաղկացած է եղել ինքնին տնից եւ հողամասից, փոխանցվել է պետական գերատեսչությանը: Այդպիսով, նա հայցել է վերոհիշյալ տան եւ հողամասի նկատմամբ սեփականության իր իրավունքի ճանաչումը:

8. 1994 թվականի օգոստոսի 19-ին Սպանդարյանի շրջանային [Ժողովրդական] դատարանը բավարարել է պահանջը՝ չեղյալ համարելով վերոհիշյալ համաձայնագիրն ու դիմումատուին ճանաչելով որպես տան եւ հողամասի սեփականատեր: Սույն վճռի դեմ բողոք չի ներկայացվել, եւ այն դարձել է վերջնական:

9. Պարզվում է, որ 1994 թվականի նոյեմբերի 3-ին տան եւ հողամասի սեփականության վկայականը դիմումատուին տրվել է 1994 թվականի օգոստոսի 19-ի վճռին համապատասխան:

10. Գերագույն դատարանի նախագահի առաջին տեղակալի դիմումի համաձայն՝ 1995 թվականի փետրվարի 9-ին Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով դատական կոլեգիան բեկանել է 1994 թվականի օգոստոսի 19-ի վճիռը:

11. 1995 թվականի դեկտեմբերի 8-ին առաջին դիմումատուն հայց է ներկայացրել Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով դատական կոլեգիա՝ պահանջելով ճանաչել Բյուզանդի 13 հասցեում տեղակայված տան նկատմամբ ժառանգության եւ սեփականության իր իրավունքները: Հայցի եզրափակիչ մասում առաջին դիմումատուն նշել է, որ հայցում է ժառանգության իր իրավունքների ճանաչում եւ՝ տան, եւ՝ հողամասի մասով:

12. 1995 թվականի դեկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով դատական կոլեգիան քննել է առաջին դիմումատուի հայցն ու որոշել մերժել այն:

13. 1997 թվականի սեպտեմբերի 22-ին Գերագույն դատարանի նախագահությունը բեկանել է 1995 թվականի դեկտեմբերի 11-ի վճիռն ու որոշել հայցը բավարարել:

14. 1998 թվականի դեկտեմբերի 29-ին Վճռաբեկ դատարանի (1995 թվականի Սահմանադրությամբ հաստատված եւ 1998 թվականի հուլիսի 10-ից գործող բարձրագույն դատական ատյանի) լիազույժար նիստում ուսումնասիրվել է Գլխավոր դատախազության կողմից ներկայացված վերահսկիչ բողոքի վերաբերյալ 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը, եւ որոշում է կայացվել այն ուժի մեջ թողնելու մասին:

15. Պարզվում է, որ առաջին դիմումատուին տրվել է տան եւ հողամասի նկատմամբ սեփականության նոր վկայական, որում որպես սեփականության իրավունքի հիմք է նշվել 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը:

16. Չպարզված օրն առաջին դիմումատուն հայց է ներկայացրել երրորդ անձանց դեմ, որոնց պատկանել են իր հողամասի վրա գտնվող երկու փոքր շինություններ:

17. 2000 թվականի հուլիսի 18-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանը բավարարել է առաջին դիմումատուի հայցը: Մասնավորապես, այն գտել է, որ դիմումատուի՝ Բյուզանդի 13 հասցեում տեղակայված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնվել է Գերագույն դատարանի նախագահության՝ 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ, ուստի դրա վրա տեղակայված ցանկացած շինություն նույնպես պետք է ճանաչվեր որպես նրան սեփականության իրավունքով պատկանող:

**Բ. Մասնավոր գույքը հանրային նպատակներով օտարելու վերաբերյալ
Կառավարության ծրագիրը**

18. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատել է Երեւանի Կենտրոն վարչական շրջանի վարչական սահմաններում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

Բյուզանդ փողոցը ներառված է եղել օտարման այդպիսի գոտիներում ընդգրկված փողոցների ցանկում: Կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացը կառավարելու նպատակով ստեղծվել է հատուկ մարմին՝ Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ):

19. 2004 թվականի հունիսի 17-ին Կառավարությունը որոշել է Բյուզանդ փողոցի հատվածներից մեկի կառուցապատման գործը պայմանագրային հիմունքներով հանձնել մասնավոր ընկերության, այն է՝ «Վիզկոն» ՍՊԸ-ին: Վերջինս լիազորված է եղել անմիջականորեն բանակցելու սեփականատերերի հետ օտարման ենթակա գույքի հարցերով, իսկ այդպիսի բանակցությունների ձախողման դեպքում՝ պետության անունից հայց ներկայացնելու դատարան՝ գույքի հարկադիր օտարման պահանջով: Պարզվում է, որ 2004 թվականի դեկտեմբերի 8-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն համաձայնություն է ձեռք բերել «Տոսպ» ՍՊԸ անշարժ գույքի գնահատման գործակալության հետ, որ վերջինս իրականացնի Բյուզանդի 13 հասցեում տեղակայված անշարժ գույքի գնահատումը:

20. 2005 թվականի մայիսի 19-ին «Տոսպ» ՍՊԸ-ն իրականացրել է գնահատում՝ համաձայն որի՝ դիմումատուների տան շուկայական արժեքը կազմել է 54 494 000 ՀՀ դրամ, իսկ հողամասինը՝ 276 230 000 ՀՀ դրամ:

Գ. Սեփականության իրավունքի նոր վկայականի տրամադրումն առաջին դիմումատուին

21. 2005 թվականի ապրիլի 15-ին Գործակալությունը խորհրդակցություն է անցկացրել իր կառավարման խորհրդի հետ, որում ընդգրկված են եղել ներկայացուցիչներ Կառավարությունից, Անշարժ գույքի պետական ռեգիստրից (ԱԳՊՌ), Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունից, Քաղաքապետարանից եւ Ոստիկանության բաժանմունքից, եւ որի ընթացքում որոշվել է առաջին դիմումատուին տրամադրել Բյուզանդի 13 հասցեում

տեղակայված տան եւ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի նոր նմուշի վկայական:

22. 2005 թվականի մայիսի 13-ին առաջին դիմումատուին տրամադրվել է տան եւ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի նոր վկայական: Որպես սեփականության իրավունքի գրանցման հիմք այն հիշատակել է Երեւան քաղաքի Սպանդարյանի շրջանային ժողովրդական դատարանի՝ 1994 թվականի օգոստոսի 19-ի վճիռը, Գերագույն դատարանի նախագահության՝ 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը, Վճռաբեկ դատարանի լիազույստ նիստում 1998 թվականի դեկտեմբերի 29-ին կայացված որոշումն ու Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 18-ի վճիռը:

Դ. Հողի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքը վիճարկող վարույթը (վարույթն առաջին ատյանում)

23. 2005 թվականի նոյեմբերի 22-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն Երեւանի քաղաքապետարանի անունից հայց է ներկայացրել ԱԳՊՌ-ի դեմ՝ պահանջելով անվավեր ճանաչել հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքի գրանցումը՝ պնդելով, որ դա երբեւէ որեւէ դատական ակտով ճանաչված չի եղել: Այն նաեւ պահանջել է, որ առաջին դիմումատուն ներգրավվի վարույթում որպես երրորդ անձ, որի իրավունքները շոշափվում են հայցով:

24. 2006 թվականի հունվարի 13-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանը բավարարել է հայցը՝ գտնելով, որ հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքը երբեւէ դատական ակտով ճանաչված չի եղել:

25. 2006 թվականի հունվարի 24-ին առաջին դիմումատուն բողոք է ներկայացրել այդ վճիռի դեմ:

26. 2006 թվականի փետրվարի 27-ին Վերաքննիչ դատարանը մերժել է հայցը՝ համարելով այն չհիմնավորված: Մասնավորապես, այն գտել է, որ հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի իրավունքը ճանաչվել է Գերագույն դատարանի նախագահության՝ 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ ու Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 18-ի վճռով:

27. Չպարզված օրը «Վիզկոն» ՍՊԸ-ն վճռաբեկ բողոք է ներկայացրել այդ վճռի դեմ:

28. Չպարզված օրը զեկուցողը, Վճռաբեկ դատարանի դատավոր Հ.-ն առաջին դիմումատուին ներկայացրել են Գործակալության, «Վիզկոն» ՍՊԸ-ի եւ ԱԳՊՌ-ի հետ հաշտության համաձայնության առաջարկ: Ըստ առաջարկի՝ առաջին դիմումատուն տան եւ հողամասի նկատմամբ սեփականության իր իրավունքը չեղյալ հայտարարելու դիմաց պետք է ստանար 390 000 ԱՄՆ դոլար, 160 քառ. մետր մակերեսով բնակարան եւ 40 քառ. մետր մակերեսով գրասենյակային տարածք Երեւանի կենտրոնում:

29. 2006 թվականի ապրիլի 19-ին դիմումատուն դատավորին է ուղարկել իր պատասխանը՝ տեղեկացնելով, որ ինքը հրաժարվում է հաշտության համաձայնություն ստորագրելուց:

30. 2006 թվականի ապրիլի 21-ին Վճռաբեկ դատարանն անցկացրել է բողոքի լսում՝ կողմերի մասնակցությամբ: Հաշվի առնելով, որ առաջին դիմումատուն հրաժարվել է Կառավարության հետ հաշտության համաձայնություն ստորագրելուց՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական գործերով պալատի նախագահը՝ դատավոր Մ.-ն, որն ի պաշտոնե նախագահել է բողոքի քննությունը, նշել է.

«Յուրաքանչյուր կողմ փոխզիջումների ճանապարհով պետք է գա լուծման... Եթե մենք շարունակենք ձգձգել այս վեճը, ապա կտոնենք դրա հարյուրամյակը... Նշե՛ք գալու եւ դատավոր Հ.-ի մոտ, կողմերի ներկայությամբ Ձեր բոլոր գաղափարները ներկայացնելու համար՝ Ձեզ հարմար օրն ու ժամը... սակայն փորձե՛ք արդյունավետ քննարկում ունենալ

դատավոր Հ.-ի մոտ... [մինչ այդ] Դուք դրա համար բավական ժամանակ ունեք: Հանդիպե՛ք եւ քննարկե՛ք եւ փորձե՛ք ընդհանուր կետեր գտնել հաշտության համաձայնության մեջ, որպեսզի ձեր քննարկումն արդյունավետ լինի:»:

Այս խոսքերով դատավոր Մ.-ն գործի լսումը համարել է փակված:

31. 2006 թվականի մայիսի 5-ին Վճռաբեկ դատարանը բողոքի մեկ այլ լսում է անցկացրել: Իմանալով, որ առաջին դիմումատուն դեռ հրաժարվում է հաշտության համաձայնություն ստորագրելուց՝ դատավոր Մ.-ն նշել է.

«Դուք բազմիցս մասնակցել եք Պալատի նիստերին եւ պետք է նկատած լինեք, որ Պալատը միշտ կարեւորություն է տալիս այն փաստին, թե որ կողմն է հրաժարվել ստորագրել ողջամիտ հաշտության համաձայնությունը: Ուստի, սա վերջին անգամ է, որ մենք՝ Պալատը, Ձեզ հնարավորություն ենք տալիս մինչ հաջորդ նիստը... մեկ անգամ ես քննարկել [հաշտության համաձայնության] պայմանները եւ ներկայացնել Ձեր պատասխանը... [դատավոր] Հ.-ին:»:

Այս խոսքերով դատավոր Մ.-ն գործի լսումը համարել է փակված:

32. Պարզվում է, որ առաջին դիմումատուն համառորեն պնդել է հաշտության համաձայնություն ստորագրելու իր մերժողական դիրքորոշումը:

33. 2006 թվականի հուլիսի 28-ին Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատը՝ նախագահող դատավոր Մ.-ի եւ դատավորներ Հ.-ի, Գ.-ի ու Ա.-ի կազմով, բեկանել է 2006 թվականի փետրվարի 27-ի վճիռն ու գործն ուղարկել նոր քննության: Այդ որոշման համապատասխան հատվածները շարադրվել են հետեւյալ բովանդակությամբ.

«...[դատարանի համապատասխան որոշումների] ուսումնասիրությունից հետեւում է, որ որեւէ հողամասի նկատմամբ [առաջին դիմումատուի] սեփականության իրավունքը երբեւէ չի ճանաչվել, հետեւաբար իրավական հիմքեր չկան հողամասի նկատմամբ [առաջին դիմումատուի] սեփականության իրավունքը գրանցելու համար:

...

Նման պայմաններում հիմնավոր են նյութական եւ դատավարական խախտման մասին վճռաբեկ բողոքների պատճառաբանությունները, քանի որ վերը նշված դատական ակտերով որեւէ հողամասի նկատմամբ [առաջին դիմումատուի] սեփականության

իրավունքը չի ճանաչվել, հետեւաբար իրավական հիմքեր չկան հողամասի նկատմամբ [առաջին դիմումատուի] սեփականության իրավունքը գրանցելու համար: Ավելին, պետության սեփականության ներքո գտնվող հողամասի նկատմամբ առանց որեւէ իրավական հիմքի գրանցվել է [առաջին դիմումատուի] սեփականության իրավունքը:»:

34. 2006 թվականի սեպտեմբերի 15-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերստին ուսումնասիրել է հայցն ու բավարարել այն՝ գտնելով, որ հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքը չի ճանաչվել: Մասնավորապես, այն նշել է.

«...[դատարանի համապատասխան որոշումների] ուսումնասիրությունից հետեւում է, որ որեւէ հողամասի նկատմամբ [առաջին դիմումատուի] սեփականության իրավունքը երբեւէ չի ճանաչվել... Հետեւաբար պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի նկատմամբ [առաջին դիմումատուի] սեփականության իրավունքը գրանցվել է առանց որեւէ իրավական հիմքի»:

35. 2007 թվականի փետրվարի 12-ին առաջին դիմումատուն այդ վճռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պնդելով, *inter alia* (ի թիվս այլնի), որ Վերաքննիչ դատարանը չի եղել անկախ եւ անկողմնակալ, քանի որ այն առաջնորդվել է Վճռաբեկ դատարանի՝ 2006 թվականի հուլիսի 28-ի որոշման մեջ արտահայտված եզրահանգումներով:

36. 2007 թվականի մարտի 2-ին Վճռաբեկ դատարանը բողոքը հայտարարել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

Ե. Տան օտարման վերաբերյալ վարույթը (վարույթը երկրորդ աստիճանում)

37. 2005 թվականի դեկտեմբերի 25-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն առաջին դիմումատուին տեղեկացրել է, որ վերջինիս պատկանող տունը գտնվում է օտարման գոտում: Ընկերությունը նրան տեղեկացրել է նաեւ, որ իր տունը գնահատման լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատվել է 54 494 000 ՀՀ դրամ, եւ իրեն՝ որպես սեփականատիրոջ, առաջարկել է այդ գումարը՝ որպես օտարման դիմաց փոխհատուցում: Որպես ֆինանսական

խրախուսանք նրան պետք է վճարվեր նաեւ հավելյալ գումար՝ համաձայն Կառավարության՝ 2005 թվականի մայիսի 19-ի թիվ 759-Ն որոշման, եթե նա համաձայներ ստորագրել համաձայնագիրն ու գույքը հանձնել մեկ ամսվա ընթացքում:

38. Պարզվում է, որ առաջին դիմումատուն չի ընդունել առաջարկը:

39. 2006 թվականի հունվարի 26-ին Երեւանի քաղաքապետարանն առաջին դիմումատուի դեմ հայց է ներկայացրել՝ պահանջելով դադարեցնել տան նկատմամբ նրա սեփականության իրավունքը՝ նրան փոխհատուցում վճարելով եւ պահանջելով վտարել նրան: «Վիզկոն» ՍՊԸ-ն նույնպես ներգրավվել է այս վարույթում որպես երրորդ կողմ:

40. 2006 թվականի ապրիլի 18-ին Սահմանադրական դատարանը Կառավարության՝ 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշումն ու Քաղաքացիական օրենսգրքի (ՔՕ) 218-րդ հոդվածը, *inter alia*, հակասահմանադրական է ճանաչել, սակայն որոշել է, որ վիճարկվող իրավական դրույթները պետք է գործեն մինչեւ օտարման համար իրավական ռեժիմ սահմանող օրենք ընդունելը, սակայն պայմանով, որ ամեն դեպքում այդ դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետը լինի 2006 թվականի հոկտեմբերի 1-ը:

41. 2006 թվականի օգոստոսի 22-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանը քննել է հայցն առաջին դիմումատուի եւ Քաղաքապետարանի ներկայացուցչի ներկայությամբ: Համապատասխան վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանը որոշել է հայցը բավարարել՝ առաջին դիմումատուին տրամադրելով 54 494 000 ՀՀ դրամի չափով գումար եւ արձակելով նրան վտարելու կարգադրություն: Համապատասխան վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանն իր եզրահանգումների համար հիմք է ընդունել Քաղաքացիական օրենսգրքի 218-221-րդ եւ 283-րդ հոդվածները:

42. 2006 թվականի սեպտեմբերի 4-ին առաջին դիմումատուն բողոք է ներկայացրել, որի քննությունը տարաժամկետով է՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 2006 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացվելու պայմանով:

43. 2006 թվականի սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերն առաջին դիմումատուն իրեն վատառողջ է զգացել եւ շտապ օգնության մեքենայով տեղափոխվել հիվանդանոց, որտեղ նրա մոտ ախտորոշել են սիրտ-անոթային համակարգի ֆունկցիոնալ խանգարում:

44. 2006 թվականի սեպտեմբերի 25-ին, նախքան գործի լուծմը սկսելը, Վերաքննիչ դատարանը ստացել է առաջին դիմումատուի կողմից ներկայացված գրավոր պահանջ՝ վերջինիս առողջական խնդիրների պատճառով գործի լուծմը հետաձգելու վերաբերյալ: Պարզվում է, որ դիմումատուի՝ հիվանդանոցում գտնվելու փաստը հաստատող՝ հիվանդանոցի կողմից տրամադրված տեղեկանքը կցված է եղել տվյալ պահանջին:

45. 2006 թվականի սեպտեմբերի 25-ին Վերաքննիչ դատարանը գործի լուծմն անցկացրել է առաջին դիմումատուի եւ նրա ներկայացուցչի բացակայությամբ, սակայն Քաղաքապետարանի եւ «Վիզկոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչների ներկայությամբ, որոնք առաջին դիմումատուի բողոքի հետ կապված ներկայացրել են իրենց փաստարկները՝ խնդրելով մերժել այն: Ինչ վերաբերում է գործի լուծմը տարաժամկետելու վերաբերյալ առաջին դիմումատուի պահանջին, ապա, գործի լսման արձանագրության համաձայն, Վերաքննիչ դատարանը մերժել է հետաձգումն այն հիմքով, որ առաջին դիմումատուն ունեցել է ներկայացուցիչ, որը մասնակցել է համապատասխան վարչական շրջանի [ընդհանուր իրավասության] դատարանի վարույթներին: Վերաքննիչ դատարանը նույն օրն ընդունած վճռով անփոփոխ է թողել 2006 թվականի օգոստոսի 22-ի վճիռը՝ հաստատելով համապատասխան վարչական շրջանի [ընդհանուր իրավասության] դատարանի կողմից տրամադրված գումարի չափը: Վճռում նշված է եղել, որ առաջին դիմումատուն չի ներկայացրել՝ պատշաճ ձեւով ծանուցված լինելով լուծմներին ներկայանալու վերաբերյալ:

46. Բուժումն ստանալուց հետո առաջին դիմումատուն 2006 թվականի հոկտեմբերի 2-ին դուրս է գրվել հիվանդանոցից:

47. 2006 թվականի դեկտեմբերի 20-ին առաջին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել 2006 թվականի սեպտեմբերի 25-ին կայացված վճռի դեմ:

48. 2007 թվականի հունվարի 16-ին Վճռաբեկ դատարանն առաջին դիմումատուի բողոքը հայտարարել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

49. Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռն ուժի մեջ է մտել այն կայացնելու օրն ու անմիջապես դարձել կիրառելի:

50. 2007 թվականի մայիսին առաջին դիմումատուն փորձել է դադարեցնել 2006 թվականի սեպտեմբերի 25-ի վճռի առնչությամբ կատարողական վարույթը՝ հիմնվելով Սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ապրիլի 18-ի որոշման վրա, որով Կառավարության թիվ 1151-Ն որոշումն ու ՔՕ 218-րդ հոդվածը ճանաչվել էին Սահմանադրությանը չհամապատասխանող:

51. 2007 թվականի հունիսի 11-ին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան բաժինը ի կատար է ածել վճիռը՝ քանդելով տունը:

52. 2007 թվականի հուլիսի 6-ին Վերաքննիչ դատարանը մերժել է առաջին դիմումատուի բողոքը՝ գտնելով, որ 2007 թվականի հունիսի 11-ին վճիռն ի կատար է ածվել, եւ կատարողական վարույթը դադարեցվել է:

2. Երկրորդ եւ երրորդ դիմումատուների բողոքը 2006 թվականի սեպտեմբերի 25-ի վճռի դեմ

53. 2007 թվականի մայիսի 18-ին երկրորդ եւ երրորդ դիմումատուները Վերաքննիչ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 25-ի վճռի դեմ բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ պնդելով, որ առաջին դիմումատուի դեմ

հարուցված տան օտարման վարույթի մասին նրանք տեղեկացել են 2007 թվականի փետրվարի 19-ին: Բողոքի մեջ երկրորդ եւ երրորդ դիմումատուները վիճարկել են, որ իրենք առաջին դիմումատուի տան նկատմամբ ունեն բնակելի տարածության օգտագործման իրավունք, ուստի օտարման վարույթը շոշափում է նաեւ իրենց՝ գույքի նկատմամբ իրավունքները: Այսպիսով, նրանք պնդել են, որ իշխանությունները թերացել են իրենց այդ վարույթի մեջ ներգրավելու հարցում, եւ որ գույքից իրենց ենթադրաբար զրկելը չի եղել օրինական եւ չի բխել հանրային շահերից:

54. 2007 թվականի հուլիսի 24-ին Վճռաբեկ դատարանը 2007 թվականի մայիսի 18-ի բողոքը հայտարարել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով՝ գտնելով, *inter alia*, որ երկրորդ եւ երրորդ դիմումատուների իրավունքները որեւէ կերպ չեն շոշափվում, քանի որ առաջին դիմումատուն քննարկվող տան միակ սեփականատերն է:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Գույքից զրկելը

55. Համապատասխան ներպետական դրույթների համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* [*Minasyan and Semerjyan v. Armenia*] գործով վճիռը (թիվ 27651/05, §§ 23-43, 2009 թվականի հունիսի 23):

Բ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (տվյալ ժամանակահատվածում գործող)

56. Համաձայն 33-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության

համաձայնությամբ: Դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետեւանքները:

57. 120-րդ հոդվածով նախատեսվում է, որ նախագահող դատավորը դատավարության մասնակիցներին պարզաբանում է նրանց իրավունքները եւ պարտականությունները եւ անցնում է գործն ըստ էության քննելուն: Նախագահող դատավորը պարզում է՝ արդյոք հայցվորը պնդում է իր պահանջները, պատասխանողն արդյոք ընդունում է հայցվորի պահանջները, եւ կողմերը չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն:

58. Համաձայն 215-րդ հոդվածի՝ Վերաքննիչ դատարանը գործերը քննում է՝ առաջին ատյանի դատարանի վարույթի նկատմամբ կիրառվող կանոններին համապատասխան:

59. Համաձայն 238-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Վճռաբեկ դատարանն իրավասու չէ հաստատելու կամ հաստատված համարելու այն հանգամանքները, որոնք հաստատված չեն եղել վճռում կամ մերժվել են վճռով, կանխորոշելու ապացույցների հավաստիությունը, մեկ այլ ապացույցի նկատմամբ մի ապացույցի գերակայության հարցը կամ անդրադառնալու նյութական իրավունքի կիրառելի դրույթների հարցին ու այն վճռին, որը պետք է կայացվի գործի նոր քննությամբ:

Գ. Կառավարության՝ 2005 թվականի մայիսի 19-ի թիվ 759-Ն որոշումը, որը ներառում է Կառավարության՝ 2001 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշման մեջ կատարված փոփոխությունները

60. 7-րդ կետով նախատեսվում է, որ օտարման գոտում գտնվող անշարժ գույքի (հողամասերի, շենքերի, շինությունների) դիմաց փոխհատուցման չափը որոշելու համար հիմք է հանդիսանում անշարժ գույքի շուկայական արժեքը, որը որոշվում է մրցույթով հաղթող ճանաչված՝ գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպության կողմից: Անշարժ գույքի օտարումը սեղմ ժամկետներում իրականացնելու նպատակով կիրառվում են

Ֆինանսական խրախուսումներ՝ պայմանով, որ սեփականատերը գնային առաջարկ ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնություն տա մեկամսյա ժամկետում պայմանագիր կնքելու եւ պայմանագրով սահմանված ժամկետում քանդման նպատակով տարածքն ազատելու մասին: Փոխհատուցման չափի հաշվարկն իրականացվում է հետեւյալ բանաձեւով. եթե անշարժ գույքի եւ հողամասի շուկայական արժեքը կազմում է 20 000 001 ՀՀ դրամ եւ ավելի, ապա ֆինանսական խրախուսման գումարի չափը հավասար է 0.3 անգամ շուկայական արժեքին (7(դ) կետ): Անշարժ գույքի եւ հողամասի դիմաց փոխհատուցումը, որը պետք է վճարվի սեփականատիրոջը, կազմում է շուկայական արժեքը՝ գումարած ֆինանսական խրախուսման գումարի չափը:

Դ. Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը, Հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ եւ 108-րդ հոդվածներն ու Կառավարության՝ «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված թիվ 1151-Ն որոշումը Սահմանադրության 31-րդ կետին համապատասխանեցնելու մասին Սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ապրիլի 18-ի որոշումը

61. Սահմանադրական դատարանը, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա, գտել է, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ին փոփոխված Սահմանադրության 31-րդ հոդվածով պահանջվում է, որ օտարման գործընթացը կարգավորվի օրենքով: Այդ օրենքը պետք է հստակ ձեակերպմամբ սահմանի հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման իրավական ռեժիմը: Վիճարկվող իրավական դրույթները՝ ներառյալ Կառավարության թիվ 1151-Ն որոշումն ու Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածը, չեն

բավարարել այդ պահանջը եւ, այդպիսով, անհամատեղելի են եղել, *inter alia*, Սահմանադրության 31-րդ հոդվածի հետ: Հիմնվելով Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ պարբերության վրա՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող իրավական դրույթներն ուժի մեջ են լինելու մինչեւ օտարման համար իրավական ռեժիմ սահմանող օրենք ընդունելը, սակայն ամեն դեպքում այդ դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ համարվելու է 2006 թվականի հոկտեմբերի 1-ը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

62. Առաջին դիմումատուն բողոքել է, որ առաջին ատյանի վարույթում ներպետական դատարանները խախտել են վճիռների վերջնական լինելու սկզբունքը, եւ որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական գործերով պալատի նախագահն անկողմնակալ չի եղել: Նա նաեւ բողոքել է, որ երկրորդ ատյանում Վերաքննիչ դատարանը լսումն անցկացրել է իր բացակայությամբ: Նա պնդել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... անկախ ու անաչառ դատարանի կողմից արդարացի ... դատաքննության իրավունք:»:

Ա. Ընդունելիությունը

63. Դատարանը նշում է, որ այս բողոքները, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չեն: Դատարանն

այնուհետև նշում է, որ դրանք անընդունելի չեն որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Իրավական որոշակիության սկզբունքը

64. Առաջին դիմումատուն պնդել է, որ բավարարելով Երեւանի քաղաքապետարանի հայցն առաջին ատյանի վարույթում, ներպետական դատարանները խախտել են վճիռների վերջնական լինելու սկզբունքը: Նա պնդել է, որ այդ վարույթը փաստացի իրենից ներկայացրել է քողարկված բողոք Գերագույն դատարանի նախագահության՝ 1997 թվականի սեպտեմբերի 22-ի վերջնական որոշման դեմ, որն անփոփոխ էր թողնվել Վճռաբեկ դատարանի լիազումար նիստում 1998 թվականի դեկտեմբերի 29-ին կայացված որոշմամբ, որով ճանաչվել էր քննարկվող հողամասի նկատմամբ սեփականության իր իրավունքը:

65. Կառավարությունը պնդել է, որ դատարաններն առաջին ատյանի վարույթում պարզապես անդրադարձել են ԱԳՊՌ-ի կողմից Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 18-ի վճռի սխալ մեկնաբանությանը, որի արդյունքում այն 2005 թվականի մայիսի 13-ին սեփականության նոր վկայական է տրամադրել դիմումատուին:

66. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ տրիբունալի առաջ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ ի թիվս այլոց, օրենքի գերակայությունը Պայմանավորվող կողմ հանդիսացող պետությունների ընդհանուր ժառանգության մասն է: Օրենքի գերակայության հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որով,

inter alia պահանջվում է, որ դատարանի կողմից որեւէ հարցի վերջնական լուծման կապակցությամբ կայացված դատական ակտը կասկած չհարուցի (տե՛ս, *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* [*Brumărescu v. Romania*] [ՄՊ], թիվ 28342/95, § 61, ՄԻԵԴ 1999-VII):

67. Իրավական որոշակիությունը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում (տե՛ս վերելում՝ *Բրումարեսկուի* գործը, § 62): Այդ սկզբունքով պահանջվում է, որ կողմերից ոչ մեկն իրավասու չլինի պահանջելու վերջնական եւ պարտադիր դատական ակտի վերանայում՝ զուտ կրկնակի լսումների անցկացման եւ գործով նոր ակտի կայացման նպատակով: Ավելի բարձր ատյանի դատարանների կողմից գործը վերանայելու իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալներն ու արդարադատության սխալ իրականացումն ուղղելու, բայց ոչ նոր քննություն անցկացնելու նպատակով: Վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձեւ, իսկ ուսումնասիրվող առարկայի նկատմամբ երկու հակադիր հայացքների առկայության զուտ հնարավորությունը չի կարող հիմք ծառայել կրկնակի քննություն իրականացնելու համար: Այդ սկզբունքից շեղումն արդարացվում է միայն այն դեպքում, երբ դա կատարվում է անհրաժեշտությունից ելնելով՝ պայմանավորված էական եւ պարտադիր բնույթ ունեցող հանգամանքներով (տե՛ս, *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* [*Ryabykh v. Russia*] գործը, թիվ 52854/99, § 52, ՄԻԵԴ 2003-IX. *Ռոշկան ընդդեմ Մոլդովայի* [*Rosca v. Moldova*] գործը, թիվ 6267/02, § 25, 2005 թվականի մարտի 22):

68. Վերադառնալով ներկայիս գործին՝ Դատարանը նշում է, որ հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքը ճանաչվել է Գերագույն դատարանի նախագահության՝ 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ, որն անփոփոխ էր թողնվել Վճռաբեկ դատարանի լիազումար նիստում 1998 թվականի դեկտեմբերի 29-ին կայացված որոշմամբ եւ ուստի այն դարձել է վերջնական եւ կատարման ենթակա: Բացի այդ, առաջին դիմումատուի սեփականատեր լինելու փաստը մեկ անգամ եւս վերահաստատվել է Կենտրոն եւ

Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 18-ի վճռով, որը նույնպես դարձել էր վերջնական եւ կատարման ենթակա (տե՛ս վերելում՝ 13-րդ եւ 17-րդ պարբերությունները): Առաջին դիմումատուի՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման արդյունքում, ապա վերագրանցվել է 2005 թվականի մայիսի 13-ին՝ հիմնվելով, *inter alia*, միեւնույն որոշման եւ 2000 թվականի հուլիսի 18-ի վճռի վրա (տե՛ս վերելում՝ 15-րդ եւ 22-րդ պարբերությունները):

69. Չնայած այս ամենին՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, Երեւանի քաղաքապետի կողմից ԱԳՊՌ-ի դեմ հարուցած մեկ այլ ատյանի վարույթում առաջին դիմումատուի սեփականության իրավունքի ճանաչումը համարել է անօրինական եւ որեւէ դատական ակտի վրա չհիմնված (տե՛ս վերոհիշյալ 34-րդ պարբերությունը):

70. Դատարանը նշում է, որ, բավարարելով Քաղաքապետի հայցը, ներպետական դատարաններն առաջին ատյանի վարույթում, փաստորեն, անուղղակիորեն վերանայել են առաջին դիմումատուի՝ հողամասի նկատմամբ իրավունքներ ունենալու կամ չունենալու հարցը՝ անկախ այդ հարցով վերջնական դատական ակտերի առկայությունից: Դա հանգեցրել է այդ դատական ակտերի իրավական ուժը կորցնելուն, թեւ պաշտոնապես դրանք դեռեւս ուժի մեջ են եղել: Դատարանը, հետեւաբար, գտնում է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ, որը 2007 թվականի մարտի 2-ին անփոփոխ էր թողնվել Վճռաբեկ դատարանի կողմից, չեղարկվել է ամբողջ դատական գործընթացը, որն ավարտվել է դատական որոշումներով, որոնք եղել են «անբեկանելի» եւ ուստի՝ *res judicata*, եւ որոնք, բացի այդ, ի կատար են ածվել (տե՛ս վերելում՝ *Բրումարեսկուի* գործը *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), § 62): Ոչինչ չի վկայում այն մասին, որ առկա է եղել էական եւ պարտադիր բնույթ ունեցող որեւէ հանգամանք, որն արդարացնում է այն հարցի վերանայումը, որը նախկինում որոշված է եղել

վերջնական եւ պարտադիր դատական որոշումներով: Վերոնշյալից ելնելով՝ Դատարանը եզրակացնում է, որ Երեւանի քաղաքապետի ներկայացրած հայցը բավարարելով՝ դատարանը խախտել է իրավական որոշակիության սկզբունքը:

71. Հետեւաբար, այս առումով տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2. Անկախ տրիբունալի կողմից լսումների իրավունքը

72. Առաջին դիմումատուն պնդել է, որ առաջին աստիճանի վարույթում դատավոր Մ.-ն՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական գործերով պալատի նախագահը, անկողմնակալ չի եղել, քանի որ իրեն հարկադրել է ստորագրել հաշտության համաձայնություն՝ անուղակիորեն սպառնալով մերժելու արդյունքում ակնկալվող բացասական հետեւանքներով: Նա պնդել է, որ դատավոր Մ.-ն մի քանի անգամ հետաձգել է լսումները՝ հստակ նշելով, որ, եթե ինքը շարունակի իրաժարվել հաշտության համաձայնություն ստորագրելուց, ապա իր համար անբարենպաստ որոշում կկայացվի: Այդ սպառնալիքն իրականում ի կատար է ածվել, քանի որ 2006 թվականի հուլիսի 28-ի որոշումը, խախտելով տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 238-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, արտահայտում էր դատավորների կոլեգիալ կազմի այն դիրքորոշումը, որ դիմումատուն հողի նկատմամբ սեփականության իրավունք չունի: Այդ եզրահանգումը պարզապես արտացոլվել է Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ի վճռում:

73. Կառավարությունը պնդել է, որ հիմնավորված չի եղել այն հանգամանքը, որ դատավոր Մ.-ն որեւէ անձնական կամ մասնագիտական կողմնակալություն է ունեցել տվյալ գործի առնչությամբ: Նա չի փորձել հարկադրել առաջին դիմումատուին ստորագրելու հաշտության համաձայնություն, այլ պարզապես գործել է ընթացակարգի համապատասխան պահանջներին

համապատասխան: Մասնավորապես, ՔԴՕ 120-րդ հոդվածի համաձայն՝ նա պետք է, *inter alia*, պարզեր, թե արդյոք կողմերը ցանկանում են հաշտության համաձայնություն ստորագրել: Բացի այդ, ՔԴՕ 33-րդ հոդվածի համաձայն՝ նախագահող դատավորը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պետք է պարզաբաներ դրա դատավարական հետեւանքները:

74. Դատարանը նախելառաջ վերահաստատում է, որ ժողովրդավարական հասարակությունում հիմնարար կարեւորություն է ներկայացնում այն հարցը, որ դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն (տե՛ս *Պադովանին ընդդեմ Իտալիայի* [*Padovani v. Italy*] գործը, 1993 թվականի փետրվարի 26, § 27, շարք Ա թիվ 257-Բ): Այդ նպատակով 6-րդ հոդվածով պահանջվում է, որ դրա գործողության շրջանակներում գտնվող տրիբունալը լինի անկողմնակալ: Անաչառություն՝ սովորաբար նշանակում է կանխակալության կամ կողմնակալության բացակայություն, իսկ դրա առկայությունն այլ կերպ կարելի է ստուգել տարբեր եղանակներով: Դատարանն այդպիսով տարբերակում է դնում սուբյեկտիվ մոտեցման, այն է՝ ջանալ պարզելու կոնկրետ գործով տվյալ դատավորի անձնական համոզմունքը կամ շահը, եւ օբյեկտիվ մոտեցման միջեւ, այն է՝ որոշել, թե արդյոք նա բավարար երաշխիքներ է առաջարկել այս առումով որեւէ իրավաչափ կասկած բացառելու համար (տե՛ս համապատասխան սկզբունքների համառոտ նկարագրությունը *Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի* [*ՄՊ*] [*Kyprianou v. Cyprus* [GC]], թիվ 73797/01, §§ 118-121, ՄԻԵԴ 2005-XIII. եւ *Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի* [*ՄՊ*] [*Morice v. France* [GC]], թիվ 29369/10, § 73, ՄԻԵԴ 2015 թվական):

75. Ինչ վերաբերում է սուբյեկտիվ ստուգման չափորոշչին, ապա դատավորի անձնական անկողմնակալությունը պետք է ընդունել այնքան ժամանակ, քանի դեռ առկա չեն հակառակն ապացուցող փաստեր (տե՛ս վերելում՝ *Պադովանիի* գործը, § 26. *Մորելն ընդդեմ Ֆրանսիայի* [*Morel v. France*], թիվ 34130/96, § 41, ՄԻԵԴ 2000-VI):

76. Ինչ վերաբերում է օբյեկտիվ ստուգման չափորոշչին, ապա որպես դատարան հանդես եկող դատական մարմին դիմելը ենթադրում է որոշել, թե արդյոք, անկախ այդ մարմնի որեւէ անդամի անձնական վարքագծից, առկա են հավաստի փաստեր, որոնք կարող են այդ մարմնի անկողմնակալության մասով հիմնավոր կասկածներ առաջացնել: Սա ենթադրում է, որ այն ժամանակ, երբ որոշվում է, թե արդյոք տվյալ դեպքում առկա է որեւէ կոնկրետ դատավորի կամ որպես դատարան հանդես եկող մարմնի մոտ անկողմնակալության բացակայության մասով մտավախություն ունենալու որեւէ իրավաչափ հիմք, տվյալ անձի տեսակետը կարելի է, բայց ոչ որոշիչ: Որոշիչ է այն հանգամանքը, թե արդյոք այդ մտավախությունը կարող է համարվել օբյեկտիվորեն արդարացված (տե՛ս *Ուեյրշտայնն ընդդեմ Շվեյցարիայի* [*Wettstein v. Switzerland*], թիվ 33958/96, § 44. *Միկալլեֆն ընդդեմ Մալթայի* [ՄՊ] [*Micallef v. Malta* [GC]], թիվ 17056/06, § 96, ՄԻԵԴ 2009 թվական ՄԻԵԴ 2000-XII):

77. Դատարանը նշում է, որ առաջին դիմումատուի՝ Վճռաբեկ դատարանի անկողմնակալությանը վերաբերող մտահոգությունները ծագել են այն փաստից, որ որպես Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատի դատավորների կոլեգիալ կազմի նախագահ հանդես եկող դատավոր Մ.-ն պարբերաբար պնդել է, որ դիմումատուն ընդունի հաշտության համաձայնություն կնքելու առաջարկը:

78. Ինչ վերաբերում է սուբյեկտիվ ստուգման չափորոշչին, ապա Դատարանը նշում է, որ սույն գործում չի ներկայացվել որեւէ ապացույց, որը կարող էր Վճռաբեկ դատարանի առանձին դատավորների՝ ներառյալ դատավոր Մ.-ի մասով անձնական կողմնակալություն ենթադրել առաջին ատյանի վարույթում:

79. Ինչ վերաբերում է օբյեկտիվ ստուգման չափորոշչին, ապա Դատարանը նշում է, որ 2006 թվականի ապրիլի 21-ի եւ մայիսի 5-ի լսումների ժամանակ առաջին ատյանի վարույթում դատավոր Մ.-ն, որը նախագահել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերի պալատի լսումները, առաջին դիմումատուին հորդորել է մտածել տվյալ գործով զեկուցողի կողմից

իրեն ներկայացված հաշտության համաձայնության շուրջ (տե՛ս վերելում՝ 30-րդ և 31-րդ պարբերությունները):

80. Դատարանը նշում է, որ, համաձայն ՔԴՕ դրույթների, որոնց անդրադարձել է Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 73-րդ պարբերությունը), նախագահող դատավորը պարզում է՝ արդյո՞ք կողմերը ցանկանում են հաշտության համաձայնություն կնքել, եւ պարզաբանում է դրա դատավարական հետեւանքները: Սա Պայմանավորվող կողմ հանդիսացող պետությունների իրավակարգում հանդիպող հազվադեպ առանձնահատկությունն է եւ ծառայում է թե՛ ի շահ դատավարական տնտեսմանը եւ թե՛ արդարադատության պատշաճ իրականացմանը: Սակայն, հաշվի առնելով դատական անկողմնակալության սկզբունքի կարեւորությունը (տե՛ս *Բուշեմին ընդդեմ Իտալիայի* [*Buscemi v Italy*], թիվ 29569/95, § 67, ՄԻԵԴ 1999-VI), կողմերի՝ հաշտության համաձայնություն կնքելու ցանկությունը պարզող դատավորները պետք է զգուշավորություն ցուցաբերեն եւ խուսափեն այնպիսի բառերի գործածությունից, որոնք օբյեկտիվորեն գնահատելիս կարող են արդարացնել կողմերից մեկի՝ տվյալ դատավորի մոտ անկողմնակալության բացակայության մասով իրավաչափ մտավախություն ունենալու հանգամանքը:

81. Դատարանն ընդգծում է, որ Պալատի՝ 2006 թվականի մայիսի 5-ի լսումների ժամանակ դատավոր Մ.-ն, Դատարան ներկայացված սղագրության համաձայն (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը), անդրադարձել է առաջին դիմումատուի՝ Պալատի վարույթի մասին տեղեկացված լինելու հանգամանքին ու նրա ենթադրյալ իրազեկվածությանն այն «կարեւորությանը», որը Պալատը «մշտապես» տալիս է «կողմի՝ ողջամիտ հաշտության համաձայնություն կնքելուց հրաժարվելու» փաստին: Դատավոր Մ.-ն նաեւ ուղղակիորեն մատնանշել է, որ Պալատի նշված լսումը համարվելու է Պալատի կողմից «վերջին անգամ» առաջին դիմումատուին տրված «հնարավորություն»՝ մինչեւ հաջորդ լսումը հնարավոր հաշտության համաձայնության հարցը եւս մեկ անգամ քննարկելու եւ իր պատասխանը ներկայացնելու համար:

82. Այս ամենը դիտարկելով որպես ամբողջություն եւ տվյալ համատեքստում՝ Դատարանը համարում է, որ լսումների ժամանակ դատավոր Մ.-ի կողմից համապատասխան բառերի գործածությունը միանգամայն ունակ է եղել առաջացնելու իրավաչափ մտավախություն այն մասով, որ առաջին դիմումատուի՝ հաշտության համաձայնություն կնքելու առաջարկից հրաժարվելը կարող էր բացասաբար անդրադառնալ Պալատի կողմից դիմումատուի գործն ըստ էության քննելու վրա: Հետեւաբար Դատարանը գտնում է, որ դատավոր Մ.-ի վարքագիծը, որում բացակայել է դատական չեզոքության սկզբունքով պահանջվող անհրաժեշտ ձեռնպահությունը, առաջացրել է օբյեկտիվորեն հիմնավորված մտավախություն, որ իր մոտ բացակայել է անկողմնակալությունը դիմումատուի գործով որոշում կայացնելիս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

83. Հետեւաբար այս առումով եւս տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

3. Կողմերի իրավահավասարությունը

84. Առաջին դիմումատուն, ի վերջո, բողոքել է, որ երկրորդ աստանի վարույթում Վերաքննիչ դատարանը չի հետաձգել 2006 թվականի սեպտեմբերի 25-ի լսումը, որին ինքը չի կարողացել մասնակցել առողջական վատ վիճակի պատճառով, մինչդեռ իր հակառակ կողմի ներկայացուցիչները ներկա են եղել: Այդ հանգամանքներում ինքը զրկված է եղել իր փաստարկները ներկայացնելու հնարավորությունից, մինչդեռ Վճռաբեկ դատարանն իր վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունել:

85. Կառավարությունը պնդել է, որ Վերաքննիչ դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 25-ի լսումն անցկացրել է առաջին դիմումատուի բացակայությամբ հետեւյալ պատճառներով՝ վարույթի տեւողությունը երկար է եղել. դիմումատուն իրազեկ է եղել մյուս կողմի պնդումներին. դատարանը ծանոթ է եղել առաջին դիմումատուի փաստարկներին, եւ այդ լսումների ժամանակ չի ներկայացվել որեւէ

նոր այնպիսի ապացույց, որը կարող էր ազդեցություն ունենալ առաջին դիմումատուի շահերի վրա:

86. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի երաշխավորում քաղաքացիական դատարանում անձամբ ներկա գտնվելու իրավունք, սակայն ամրագրում է դատարանում որեւէ մեկի գործն արդյունավետորեն ներկայացնելու եւ հակառակ կողմի հետ միասին իրավահավասարությունից օգտվելու առավել ընդհանուր իրավունք: 6-րդ հոդվածի 1-ին կետը պետությանը տալիս է այնպիսի միջոցների ազատ ընտրության հնարավորություն, որոնք պետք է օգտագործվեն դատավարության մասնակիցների այս իրավունքները երաշխավորելու համար (տե՛ս *Սթիլը եւ Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Steel and Morris v. the United Kingdom*], թիվ 68416/01, §§ 59-60, ՄԻԵԴ 2005-II): Այսպիսով, անձամբ ներկա գտնվելու հարցը, վարույթի ձեւը՝ բանավոր կամ գրավոր, եւ իրավաբանական ներկայացուցչության հարցը փոխկապակցված են եւ պետք է վերլուծվեն 6-րդ հոդվածի՝ «արդար դատաքննության» երաշխիքի ավելի լայն համատեքստում: Դատարանը պետք է հաստատի՝ արդյոք դիմումատուին՝ որպես քաղաքացիական վարույթի կողմերից մեկին, տրվել է մյուս կողմի կատարած դիտարկումների կամ ներկայացրած ապացույցների վերաբերյալ տեղեկացվելու ու դիտողություններ անելու եւ իր գործն այնպիսի պայմանների լույսի ներքո ներկայացնելու հնարավորություն, որն իրեն էապես վատթար դրության մեջ չէր դնի՝ հակառակ կողմի հետ համեմատած (տե՛ս *Կրչմարը եւ այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Krčmář and Others v. the Czech Republic*], թիվ 35376/97, § 39, 2000 թվականի մարտի 3. *Դոմբո Բեհեր Բ. Վ.-ն ընդդեմ Նիդերլանդների* [*Dombo Beheer B. V. v. the Netherlands*], 1993 թվականի հոկտեմբերի 27, § 33, շարք Ա թիվ 274):

87. Վերադառնալով ներկայիս գործին՝ Դատարանը նշում է, որ խնդրո առարկա ժամանակահատվածում վերաքննություն իրականացնող դատարաններում վարույթը կարգավորվում էր՝ առաջին ատյանի դատարանների

վարույթի նկատմամբ կիրառելի (տե՛ս վերելում՝ 58-րդ պարբերությունը) ընթացակարգային կանոններին համապատասխան, այսինքն՝ բողոքարկման վարույթը նույնպես անցկացվում էր բանավոր: Դատարանն ապա նշում է, որ առաջին դիմումատուն պահանջել է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետաձգի 2006 թվականի սեպտեմբերի 25-ի լույսը, քանի որ ինքը եղել է հիվանդանոցում եւ ներկայացրել է համապատասխան փաստաթղթային ապացույց, եւ որ դիմումատուի պահանջը դատարան է հասել նախքան լույսը սկսելը: Այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը որոշել է լույսն անցկացնել Երեւանի քաղաքապետարանի եւ «Վիզկոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչների ներկայությամբ, որոնք ներկայացրել են իրենց փաստարկները՝ կապված առաջին դիմումատուի բողոքի հետ (տե՛ս վերելում՝ 44-րդ եւ 45-րդ պարբերությունները):

88. Դատարանը նկատում է, որ 2006 թվականի սեպտեմբերի 25-ի լույսը չհետաձգելու վերաբերյալ Կառավարության առաջ քաշած պատճառաբանումները չեն հիմնավորվում գործի նյութերով: Ավելին, Դատարանը չէ, որ պարտավորվում է որոշել, թե դիմումատուն ինչ փաստարկներ առաջ կքաշեր կամ չէր քաշի բողոքարկման լույսներին՝ ներկա գտնվելու դեպքում: Դատարանն ապա նկատում է, որ առաջին դիմումատուի՝ լույսը հետաձգելու վերաբերյալ պահանջը չբավարարելու պատճառը պարզապես եղել է այն փաստը, որ վերջինս ունեցել է նշանակված ներկայացուցիչ՝ առաջին ատյանի դատարանի առջեւ հանդես գալու համար: Դատարանը, այնուամենայնիվ, նկատում է, որ առաջին դիմումատուի ներկայացուցիչը ներկա չի գտնվել լսմանը: Դատարանը նաեւ նշում է, որ առաջին դիմումատուն միանգամայն հասկանալի պատճառներով հոսպիտալացվել է լսմանն անմիջապես նախորդող գիշերվա ընթացքում, եւ դրանից չի հետեւում, որ նրա ներկայացուցիչն իրականում պատշաճ կերպով տեղեկացված է եղել այդ մասին կամ հնարավորություն է ունեցել ներկայացնելու դիմումատուին լույսների ժամանակ, սակայն այդ կերպ չի գործել: Նման հանգամանքներում Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուն փաստորեն զրկված է եղել Վերաքննիչ դատարանում որեւէ կերպ ներկայացված լինելուց եւ հետեւաբար այնպիսի

պատճառների հիմքով, որոնք չեն կարող վերագրվել նրան, չի կարողացել մեկնաբանություններ անել իր հակառակ կողմի ներկայացուցչի կողմից ներկայացված փաստարկների վերաբերյալ (տե՛ս *Տերնովսկիսն ընդդեմ Լատվիայի* [*Ternovskis v. Latvia*], թիվ 33637/02, §§ 69-75, 2014 թվականի ապրիլի 29):

89. Դատարանը, ի վերջո, նկատում է, որ Վերաքննիչ դատարան ներկայացված վարույթի ենթադրյալ թերությունները հետագայում չեն վերացվել, քանի որ առաջին դիմումատուի վճռաբեկ բողոքն ապարդյուն է եղել (տե՛ս վերելում՝ 48-րդ պարբերությունը):

90. Հաշվի առնելով կողմերի իրավահավասարության սկզբունքի պահանջներն ու դրանց համապատասխանության հարցը որոշելու գործում հավանականությունների դերը՝ Դատարանը գտնում է, որ այն ընթացակարգը, որով առաջնորդվել են, դիմումատուին հնարավորություն չի ընձեռել վարույթին պատշաճ կերպով մասնակցելու եւ ուստի զրկել է նրան արդար լսումներից՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Որպես եզրահանգում՝ այս առումով եւս տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

91. Առաջին դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարանների՝ Երեւանի քաղաքապետի հայցն առաջին ատյանի վարույթում բավարարելու մասին որոշումը հանգեցրել է իրեն իր հողից կամայականորեն զրկելուն: Ապա նա պնդել է, որ իր տնից զրկվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երաշխիքների խախտմամբ, որի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք այն անհրաժեշտ է համարում, ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

Ա. Ընդունելիությունը

92. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Հողից զրկելը

93. Առաջին դիմումատուն պնդել է, որ ինքը կամայականորեն զրկվել է իր հողամասից, որի նկատմամբ սեփականության իր իրավունքը միանշանակ ճանաչված է եղել վերջնական եւ պարտադիր վճիռներով, եւ որի համար նրան արդեն տրամադրված է եղել սեփականության վկայական:

94. Կառավարությունը պնդել է, որ քննարկվող հողամասի նկատմամբ առաջին դիմումատուի սեփականության իրավունքն իրավական ուժ ունեցող որեւէ դատական ակտով չի ճանաչվել:

95. Դատարանը վերահաստատում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին եւ ամենակարեւոր պահանջն այն է, որ պետական մարմինների կողմից ցանկացած միջամտություն սեփականությունից անարգել օգտվելու իրավունքին պետք է լինի օրինական. առաջին պարբերության երկրորդ նախադասությունը թույլատրում է սեփականությունից զրկում միայն «օրենքով

նախատեսված պայմաններով», իսկ երկրորդ պարբերությունը սահմանում է, որ պետություններն իրավասու են իրականացնելու վերահսկողություն գույքի օգտագործման նկատմամբ՝ «օրենքների» կիրառման միջոցով: Ավելին, օրենքի գերակայությունը, լինելով ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, ներհատուկ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (տե՛ս *Հունաստանի նախկին թագավորը եւ այլոք ընդդեմ Հունաստանի* [*Former King of Greece and Others v. Greece*] [ՄՊ], թիվ 25701/94, § 79, ՄԻԵԴ 2000-XII):

96. Դատարանը նշում է, որ Գերագույն դատարանի նախագահությունը 1997 թվականի սեպտեմբերի 22-ի իր որոշման մեջ առաջին դիմումատուին ճանաչել է որպես քննարկվող հողամասի օրինական սեփականատեր: Որոշումն անփոփոխ է թողնվել Վճռաբեկ դատարանի լիազուրկ նիստում 1998 թվականի դեկտեմբերի 29-ին կայացված որոշմամբ: Ավելին, հողի նկատմամբ դիմումատուի իրավունքը մեկ անգամ գրանցվել է՝ հիմնվելով այդ որոշումների վրա եւ ապա վերագրանցվել 2005 թվականի մայիսի 13-ին: Այն հարցի կրկնակի ուսումնասիրությունը, թե արդյոք առաջին դիմումատուն հողի նկատմամբ իրավունքներ ունի, թե՛ ոչ, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ նրան զրկել է սեփականությունից եւ հանգեցրել միջամտության նրա՝ գույքի նկատմամբ իրավունքին, որը երաշխավորվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով (տե՛ս վերելում՝ *Բրումարեսկուի* գործը, §§ 70 եւ 74): Քանի որ Դատարանն արդեն գտել է, որ վերջնական դատական ակտը վերանայվել է իրավական որոշակիության սկզբունքի խախտմամբ, որով չի ապահովվել արդարացի հավասարակշռություն հանրության շահերի եւ դիմումատուի իրավունքների պաշտպանության միջեւ, ապա դրանից հետեւում է, որ այդ առնչությամբ նաեւ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (տե՛ս, *mutatis mutandis*, *Մարգուշինս ընդդեմ Ռուսաստանի* [*Margushin v. Russia*], թիվ 11989/03, § 40, 2010 թվականի ապրիլի 1. եւ *Կարեն Պողոսյանս ընդդեմ Հայաստանի* [*Karen Poghosyan v. Armenia*], թիվ 62356/09, § 52, 2016 թվականի մարտի 31):

2. *Տնից զրկելը*

97. Առաջին դիմումատուն փաստարկ է ներկայացրել այն մասին, որ իրեն պատկանող տնից զրկելը չի իրականացվել օրենքով նախատեսված պայմանների համաձայն, քանի որ այդ ամենը կատարվել է Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված երաշխիքների խախտմամբ:

98. Կառավարությունը զերծ է մնացել այդ բողոքի առնչությամբ որեւէ փաստարկ ներկայացնելուց:

99. Դատարանը նշում է, որ նախկինում քննել է համանման բողոքներ Հայաստանի դեմ բերված բազմաթիվ գործերում եւ եկել է այն եզրահանգման, որ գույքից զրկելը չի կատարվել տվյալ ժամանակահատվածում գործող «օրենքով նախատեսված պայմանների» համաձայն (տե՛ս, օրինակ՝ *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* [*Minasyan and Semerjyan v. Armenia*], թիվ 27651/05, §§ 69-77, 2009 թվականի հունիսի 23. *Թունյանը եւ այլոք ընդդեմ Հայաստանի* [*Tunyan and Others v. Armenia*], թիվ 22812/05, §§ 35-39, 2012 թվականի հոկտեմբերի 9): Դատարանը սույն գործում այդ եզրահանգումից շեղում կատարելու որեւէ պատճառ չի տեսնում:

100. Հետեւաբար, այս առումով եւս տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

101. Առաջին դիմումատուն բողոքել է, որ իրեն իր տնից զրկելը հանգեցրել է նաեւ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման, որը նախատեսում է՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական

անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:»:

102. Հաշվի առնելով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտմանն առնչվող բողոքի շուրջ կատարված եզրահանգումը (տե՛ս վերելում՝ 99-րդ եւ 100-րդ պարբերությունները)՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում առանձին քննել Կոնվենցիայի 8-րդ հոդվածին առնչվող բողոքը, որը նմանատիպ խնդիրներ է բարձրացնում (տե՛ս վերելում՝ *Մինասյանը եւ Սեմերջյանը*, § 82):

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

103. Դիմումատուները նաև առաջ են քաշել մի շարք այլ բողոքներ՝ համաձայն Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ եւ 13-րդ հոդվածների:

104. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով այդ բողոքների վրա տարածվում է իր իրավասությունը, Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Այստեղից հետեւում է, որ գանգատի այդ մասը պետք է մերժվի ակնհայտորեն անհիմն լինելու հիմքով՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

105. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա

Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

106. Նյութական վնասի դիմաց առաջին դիմումատուն պահանջել է 1 048 097,55 եվրոյի չափով գումար՝ որպես իր օտարված տան արժեք: Առաջին դիմումատուն պնդել է, որ իրեն իր հողամասից ապօրինաբար զրկելու արդյունքում պատճառված նյութական վնասը փոխհատուցելու ամենապատշաճ եղանակը Կառավարության համար կլիներ հողն իրեն վերադարձնելը: Նա պնդել է, որ հողը դեռևս չի օտարվել մասնավոր սուբյեկտի: Առաջին դիմումատուն հայտարարել է, որ Կառավարության կողմից հողն իրեն վերադարձնելու անհնարինության դեպքում կցանկանար դիտարկել փոխհատուցում տրամադրելու հնարավորությունը, եւ պահանջել է 10 381 842,05 եվրոյի չափով գումար, որը, ըստ նրա, տվյալ պահին կազմել է հողի շուկայական արժեքը: Դիմումատուն այնուհետև 12 000 եվրոյի չափով գումար է պահանջել՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

107. Կառավարությունը պնդել է, որ առաջին դիմումատուն չի կարող հողամասի համար փոխհատուցում պահանջել, քանի որ այն երբեք նրան չի պատկանել: Կառավարությունն ապա փաստարկ է ներկայացրել, որ տան համար պահանջվող փոխհատուցման գումարի չափը չափազանց մեծ է, եւ որ այն պետք է հաշվարկվի՝ ըստ օտարման պահին կազմող տան արժեքի: Ի վերջո, Կառավարությունը պնդել է, որ 54 494 000 ՀՀ դրամի չափով գումարը, որն առաջին դիմումատուն արդեն ստացել է ներպետական մակարդակում անցկացված վարույթի ընթացքում, համարվել է բավարար փոխհատուցում այն նյութական եւ ոչ նյութական վնասների դիմաց, որ նա կարող էր կրած լինել:

108. Սույն գործի հանգամանքներում Դատարանը համարում է, որ այնքանով, որքանով վերաբերելի է վնասների փոխհատուցմանը, 41-րդ հոդվածի կիրառման հարցը դեռևս պատրաստ չէ որոշում կայացնելու համար: Հարցը

պետք է համապատասխանաբար հետաձգվի, եւ հետագա ընթացակարգ սահմանվի՝ հաշվի առնելով Կառավարության եւ առաջին դիմումատուի միջեւ ձեռք բերված ցանկացած համաձայնություն (Դատարանի կանոնակարգի 75-րդ կանոնի 1-ին եւ 4-րդ կետեր):

Բ. Ծախսերը եւ ծախքերը

109. Առաջին դիմումատուն ծախսերի եւ ծախքերի փոխհատուցման պահանջ չի ներկայացրել: Համապատասխանաբար, Դատարանն այս մասով որեւէ փոխհատուցում չի կատարում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

110. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* իրավական որոշակիության եւ կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտման եւ անկողմնակալ տրիբունալի կողմից արդար լսման բացակայության ու գույքից զրկելու մասին բողոքն ընդունելի այնքանով, որքանով դա վերաբերում է առաջին դիմումատուին, իսկ դիմումի մնացած մասը հայտարարվել է անընդունելի.
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այնքանով, որքանով դա վերաբերում է իրավական որոշակիությանը, կողմերի անկողմնակալությանը եւ իրավահավասարությանը.

3. Վճռում է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.
4. Վճռում է, որ առկա չէ բողոքը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո քննելու անհրաժեշտություն.
5. Վճռում է, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը դեռ պատրաստ չէ որոշում կայացնելու համար եւ համապատասխանաբար՝

ա) *հետաձգում է* նշված հարցը.

բ) *առաջարկում է* Կառավարությանն ու առաջին դիմումատուին վճիռը վերջնական դառնալու օրվան հաջորդող երեք ամսվա ընթացքում, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ներկայացնել առաջին դիմումատուին փոխհատուցվելիք վնասի չափի վերաբերյալ իրենց գրավոր դիտարկումները եւ, մասնավորապես, Դատարանին ծանուցել իրենց կողմից ձեռք բերվող ցանկացած համաձայնության մասին.

գ) *հետաձգում է* հետագա ընթացակարգը եւ Պալատի նախագահին *պատվիրակում է* անհրաժեշտության դեպքում միեւնույնն ամրագրելու լիազորությունը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Արել Կամպոս՝

Քարտուղար

Միրյանա Լազարովա Տրայկովսկա՝

Նախագահ